ԵԴ1/4437/01/25

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23 հունվարի 2026 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/4437/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

**<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2025 թվականի դեկտեմբերի 8-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Վարդան Այոշայի Ղայթմազյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին

մասով, հինգ դրվագ՝ 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով թիվ 20144325 (ԵԴ1/4437/01/25) քրեական վարույթը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Մ.Արամյան) 2025 թվականի դեկտեմբերի 10-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/4437/01/25 քրեական գործի վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 12-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/4437/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

3. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Դ.Ղուկեյան) 2025 թվականի դեկտեմբերի 22-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/4437/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունվարի 20-ին:

**<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>**

5. Վարդան Ղայթմազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասով, հինգ դրվագ՝ 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«[Ն]ա, խաբեությամբ ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ, 2025 թվականի փետրվարի 7-ին տեղեկանալով, որ Ա.Ռ.Հ.-ն վաճառում է իրեն պատկանող 600.000 ՀՀ դրամ արժողությամբ «Վոլկսվագեն վենտո» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենան, նույն օրը ****** ***** ********* ****** *_** ******** *_** ***** բակում հանդիպել է վերջինիս և ունենալով խարդախությամբ հափշտակություն կատարելու դիտավորություն, խեղաթյուրելով իրականությունը, իր իրական մտադրության մասին լռելով,*

*խաբեությամբ՝ հաղորդելով կեղծ տվյալներ այն մասին, որ մինչև 2025 թվականի փետրվարի 25-ն ամբողջությամբ կվճարի ավտոմեքենայի գումարը և նույն օրը նշված վայրից ստանալով Ա.Ի.-ին պատկանող վերը նշված ավտոմեքենան, խաբեությամբ հափշտակել է այն՝ վերջինին պատճառելով խոշոր չափերի՝ 600.000 ՀՀ դրամի գույքային վնաս:*

*(…)*

*Բացի այդ, Վարդան Այոշայի Ղայթմազյանը, խաբեությամբ ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ, 2025 թվականի փետրվարի 19-ին, տեղեկանալով, որ Ն.Գ.Ա.-ն վաճառում է իրեն պատկանող 800.000 ՀՀ դրամ արժողությամբ «Վոլկսվագեն գոլֆ 3» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենան, նույն օրը ***** ***** ******** ***** *.******** ***** հրապարակում հանդիպել է վերջինիս և ունենալով խարդախությամբ հափշտակություն կատարելու դիտավորություն, խեղաթյուրելով իրականությունը, իր իրական մտադրության մասին լռելով, խաբեությամբ՝ հաղորդելով կեղծ տվյալներ այն մասին, որ մինչև 2025 թվականի մարտի 3-ն ամբողջությամբ կվճարի ավտոմեքենայի գումարը և նույն օրը նշված վայրից ստանալով Ն.Ա.-ին պատկանող վերը նշված ավտոմեքենան, խաբեությամբ հափշտակել է այն՝ վերջինին պատճառելով խոշոր չափերի՝ 750.000 ՀՀ դրամի չափի գույքային վնաս:*

*(…)*

*Բացի այդ, Վարդան Այոշայի Ղայթմազյանը, խաբեությամբ ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ, 2025 թվականի փետրվարի 24-ին, տեղեկանալով, որ Հ.Ա.Բ.-ն վաճառում է իրեն պատկանող 500.000 ՀՀ դրամ արժողությամբ «Օպել» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենան, նույն օրը ****** ***** ********** ****** *_** ******** *_** ***** բակում հանդիպել է վերջինիս և ունենալով խարդախությամբ հափշտակություն կատարելու դիտավորություն, խեղաթյուրելով իրականությունը, իր իրական մտադրության մասին լռելով, խաբեությամբ՝ հաղորդելով կեղծ տվյալներ այն մասին, որ մինչև 2025 թվականի փետրվարի 28-ն ամբողջությամբ կվճարի ավտոմեքենայի գումարը և նույն օրը նշված վայրից ստանալով Հ.Բ.-ին պատկանող վերը նշված ավտոմեքենան, խաբեությամբ*

*հափշտակել է այն՝ վերջինին պատճառելով խոշոր չափերի՝ 500.000 ՀՀ դրամի չափի գույքային վնաս:*

*(…)*

*Բացի այդ, Վարդան Ալյոշայի Ղաթմազյանը, խաբեությամբ ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ, 2025 թվականի փետրվարի 26-ին, տեղեկանալով, որ Ա.Ա.Ա.-ն վաճառում է փաստացի նրան պատկանող 800.000 ՀՀ դրամ արժողությամբ «Օպել Վեկտրա» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենան, նույն օրը ******* ***** ****** ***** *_** ****** *_** *** բակում հանդիպել է վերջինիս և ունենալով խարդախությամբ հափշտակություն կատարելու դիտավորություն, խեղաթյուրելով իրականությունը, իր իրական մտադրության մասին լռելով, խաբեությամբ՝ հաղորդելով կեղծ տվյալներ այն մասին, որ մինչև 2025 թվականի մարտի 5-ն ամբողջությամբ կվճարի ավտոմեքենայի գումարը և նույն օրը նշված վայրից ստանալով Ա.Ա.-ին փաստացի պատկանող վերը նշված ավտոմեքենան, խաբեությամբ հափշտակել է այն՝ վերջինին պատճառելով խոշոր չափերի՝ 800.000 ՀՀ դրամի չափի գույքային վնաս:*

*(…)*

*Բացի այդ, Վարդան Ալյոշայի Ղայթմազյանը, խաբեությամբ ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ, 2025 թվականի մարտի 1-ին, տեղեկանալով, որ Հ.Գ.Հ.-ն վաճառում է իրեն պատկանող 600.000 ՀՀ դրամ արժողությամբ «Վոլկսվագեն վենտո» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենան, նույն օրը ******* ***** ***** ***** *_** ****** **_** *** բակում հանդիպել է վերջինիս և ունենալով խարդախությամբ հափշտակություն կատարելու դիտավորություն, խեղաթյուրելով իրականությունը, իր իրական մտադրության մասին լռելով, խաբեությամբ՝ հաղորդելով կեղծ տվյալներ այն մասին, որ մինչև 2025 թվականի մարտի 10-ն ամբողջությամբ կվճարի ավտոմեքենայի գումարը և նույն օրը նշված վայրից ստանալով Հ.Հ.-ին պատկանող վերը նշված ավտոմեքենան, խաբեությամբ հափշտակել է այն՝ վերջինին պատճառելով խոշոր չափերի՝ 600.000 ՀՀ դրամի չափի գույքային վնաս: (…)*

*Բացի այդ, Վարդան Ալյոշայի Ղայթմազյանը 2025 թվականի օգոստոսին՝ քննությամբ չպարզված կոնկրետ օրը, տեղեկանալով, որ Ս.Ս.Հ.-ն օրավարձով*

*փրամադրում է իրեն պատկանող 1.200.000 ՀՀ դրամ արժողությամբ «Օպել» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենան, նույն օրը ***** ****** ****** ****** *_** շենքի մոտ հանդիպել է վերջինին, որտեղ բանավոր պայմանավորվածության համաձայն Ս.Հ.-ն նշված ավտոմեքենան հանձնել է Վարդան Ղայթմազյանին, ինչից հետո Վ.Ղայթմազյանը փաստացի իր օգտագործմանը և տիրապետմանը հանձնված գույքը հափշտակելու դիտավորությամբ, պարտքի դիմաց նշված գույքը տվել է Գ.Մ.Ա.-ին, այդ կերպ հափշտակելով Ս.Հ.-ին պատկանող ավտոմեքենան՝ վերջինին պատճառելով խոշոր չափերի՝ 1.200.000 ՀՀ դրամի չափով գույքային վնաս:*

*(…)*

*Բացի այդ, Վարդան Այոշայի Ղայթմազյանը, խաբեությամբ ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ, 2025 թվականի մարտ-ապրիլ ամսիներին՝ քննությամբ չպարզված կոնկրետ օրերին, մեկ միասնական դիտավորությամբ, Թ.Ա.Բ.-ին, խաբեությամբ՝ հաղորդելով կեղծ տվյալներ այն մասին, որ վաճառում է իր հարազատներին պատկանող ավտոմեքենաները, նույն ժամանակահատվածում Թ.Բ.-ին է իրացրել իր կողմից հափշտակած «Վոլկսվագեն վենտո» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի, «Վոլկսվագեն գոլֆ 3» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի, «Օպել» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի, «Օպել Վեկտրա» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի և «Վոլկսվագեն վենտո» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենաները, դրա դիմաց Թ.Բաքոյանից ստանալով ընդհանուր 1.390.000 ՀՀ դրամ գումար, հափշտակել է այն՝ վերջինին պատճառելով խոշոր չափի գույքային վնաս, ինչից հետո Թ.Բ.-ն վերը նշված ավտոմեքենաները վերադարձրել է դրանց օրինական տիրապետողներին: (…)»*[1]*:*

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվում է, որ մեղադրական եզրակացությամբ դատակոչված վարույթի մասնավոր մասնակիցներից միայն երկուսն են բնակվում Երևան քաղաքի տարածքում, իսկ դատակոչված անձանց մեջ*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 2, թերթեր 195-198:

*մեծամասնությունը՝ շուրջ 5 փուժող, բնակվում են, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքից դուրս՝ այն է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:*

*Տվյալ դեպքում արձանագրվում է, որ դատակոչված անձանցից մեծամասնության բնակության վայրը գտնվում է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, մեղադրյալը չի առարկում քրեական գործի տարածքային ընդդատության փոխման դեմ, հետևաբար Դատարանը գտնում է, որ բավարարված է ՀՀ քրեական դատավարության 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու համար սահմանված պահանջները, տարածքային ընդդատության փոփոխումը կնպաստի քրեական գործի ողջամիտ ժամկետներում քննությանը ինչով էլ պայմանավորված Դատարանը որոշում է կայացնում քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխել, այն ուղարկել քրեական գործով վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնության բնակության վայրի դատարան՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: (…)»*[2]:

7. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանն ուսումնասիրելով Վարդան Ալյոշայի Ղայթմազյանի վերաբերյալ ԵԴ1/4437/01/25, 20144325 քրեական վարույթի նյութերը, մասնավորապես թիվ 20144325 քրեական վարույթին ներգրավված անձանց ցուցակը, արձանագրում է, որ փուժողներ՝ Ա.Ա.Ա.-ն բնակվում է՝ ******* ****, *****, ***_*****, *_** ***** *_** **** հասցեում, Հ.Գ.Հ.-ն բնակվում է՝ ******* ****, ******, *_** *****, ** **** հասցեում, Ն.Գ.Ա.-ն բնակվում է՝ ******* ****, **** *_** *****, **_** ***** հասցեում, Հ.Ա.Բ.-ն բնակվում է՝ ******* *****, ***** **********, *_** *******, *_** **** **_** ******** հասեցում, Ա.Ռ.Ի.-ն բնակվում է՝ ******* *****, ***** ********, ******* *****, **** **/* հասցեում, Ս.Ս.Հ.-ն բնակվում է՝ *. *****, ********* ******* *_** ******, *_** **** հասցեում, Թ.Ա.Բ.-ն բնակվում է՝ ******** *****, ***** ******** *_** *****, *_** *****

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 19-22:

*հասցեում, վկաներ՝ Ժ.Ա.Օ.-ն բնակվում է՝ ****** ****, ***** ******** *_** *****, *_** **** հասցեում, Ա.Ժ.Օ.-ն բնակվում է՝ ******** *****, ***** ******** *_** *****, *_** **** հասցեում, Գ.Մ.Ա-ն բնակվում է՝ ******** ****, ***** ******** *_** ******, *_** **** հասցեում:*

*Այսպիսով, Դատարանը փաստում է, որ Վարդան Այոշայի Ղայթմազյանի վերաբերյալ ԵԴ1/4437/01/25, 20144325 քրեական գործով դատակոչված վարույթի 11 մասնավոր մասնակիցներից միայն հինգն են բնակվում ՀՀ Կոտայքի մարզի տարածքում, մինչդեռ երկուսը բնակվում են Երևան քաղաքի վարչական տարածքում, իսկ չորսը՝ Արմավիրի մարզում: Այսինքն, Դատարանն արձանագրում է, որ ԵԴ1/4437/01/25, 20144325 քրեական վարույթի մասավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը չի բնակվում Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի դատական տարածքում:*

*Վերոգրյալի համատեքստում, Դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 12.12.2025թ. քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին որոշմանը՝ արձանագրելով, որ դատակոչված անձանցից մեծամասնության բնակության վայրը չի հանդիսանում ՀՀ Կոտայքի մարզը՝ այն ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատական տարածքից դուրս է: Այլ կերպ՝ Դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է: (…)»[3]:*

**<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից թիվ ԵԴ1/4437/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը:

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 4, թերթեր 3-15:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[6]:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

*վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը»:*

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

*(…)*

*7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:*

12.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ դատակոչված անձանց մեծամասնությունը (հինգ տուժող), բնակվում է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, ինչպես նաև մեղադրյալը չի առարկել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու դեմ, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Կոտայքի

մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին[7]:

- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի տասնմեկ մասնավոր մասնակիցներից միայն հինգն են բնակվում Կոտայքի մարզի տարածքում, գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է[8]:

14. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերը վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Այսպես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վարույթին ներգրավված են թվով տասնմեկ մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից միայն հինգ տուժողներն են բնակվում Կոտայքի մարզում[9]: Հետևաբար, չի հաստատվում, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է:

15. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից թիվ ԵԴ1/4437/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթ 251:

փոխելու և քրեական վարույթը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

16. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Վերոշարադրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Թիվ ԵԴ1/4437/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ